

ԲՆԻԿ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏՆԵՐՈՎ ԿԱԶՄՎԱԾ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԸ

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բ. ԶԱՀՈՒԿՅԱՆ

Հայկական անձնանունների գիտական ուսումնասիրությունը համեմատաբար քիչ է ուղադրության առարկա եղել: Նրանք մի կողմ թողնենք անձնանունների: Վանապատի կարգի հին հավաքածուները և հատկապես հին հայկազյան բառարանի 2-րդ հատորում դեռևս չկան հատուկ անունների բառարանները, այս կարելի է ասել, որ հայկական անձնանունների իսկական գիտական-լեզվաբանական ուսումնասիրությունը փաստորեն սկիզբ է առնում Հ. Հյուբշմանի և Գ. Յուստիի աշխատություններով¹: Այս և հետագա հեղինակների ուղադրության կենտրոնում գերազանցապես փոխառյալ անձնանուններն են:

Հայկական անձնանունների ուսումնասիրության բնագավառում նոր փուլ է նշանավորում Հ. Աճառյանի հայկական անձնանունների հինգ հատորանոց բառարանը², որտեղ ի մի է հավաքված հայ մատենագրության հսկայածավալ նյութը՝ ստուգաբանական համապատասխան տվյալներով հանդերձ: Ինքը Աճառյանը այս նյութը խմբավորել և գիտական մեկնաբանության է ենթարկել միայն ամենաընդհանուր գծերով³: Նա բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների մասին խոսում է «Բուն հայկական անուններ», «Հայ ժողովրդական անուններ», և «Հայ ազգային անուններ» հատվածներում, որոնք խիստ համառոտ են (միասին առնված շուրջ երեք էջ) և շատ հեռու հայ անձնանունների այդ կարևոր շերտի ծավալուն բնութագիր լինելուց:

Մովսես Խորենացու «Հայոց պատմության» անձնանուններին նվիրված մեկ հոդվածը մասնակի բնութի է կրում⁴:

Հայկական անձնանունների ուսումնասիրության՝ վերևում բերված թուրքիկ ակնարկը ցույց է տալիս, որ բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները գրեթե ուղադրության չեն արժանացել: Գիտության մեջ իշխել է այն կարծիքը, որ հայերը բնիկ հնդեվրոպական անձնանուններ ընդհանրապես չեն ժառանգել, հետագայում էլ գերակշռել են օտար ծագման անձնանունները: Մտորե մենք կփորձենք քննել եղած նյութը և ցույց տալ բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների տեղը և տեսակարար կշիռը հայկական անձնանունների համակարգում, նրանց անցած սլաքմական ուղին և զարգացման ընդհանուր միտումները:

Անձնանունների պատմական քննությունը նպատակահարմար է կատարել ըստ հայոց լեզվի՝ մեր կողմից առաջարկված և հայագիտության՝ մեջ բնորոշված շրջանաժամանակ. միայն թե նկատի ունենալով, որ հնագույն շրջ-

¹ Բաղդիրը հայկազյան լեզուի. հ. Բ («Բառարան յատուկ անուանց Աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց» և «Բառարան յատուկ անուանց որք գտանին արտաբոց աստուածաշունչ գրոց» բաժինները), Վենետիկ, 1769:

² H. Hubschmann. Die armenischen Personennamen. Leipzig, 1853; Idem. Armenische Grammatik. 1-2, Leipzig, 1895-1897; F. Justi. Iranisches Namenbuch. Marburg, 1895.

³ Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. 1-5, Երևան, 1942-1962:

⁴ Հմմտ. հիշյալ բառարանի 5-րդ հատորին կցված «Հայոց անձնանունները» հոդվածը (էջ 340-362):

⁵ Գ. Բ. Զահուկյան. Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գրքի անձնանունների լեզվական աղբյուրները. «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 3, էջ 43-63:

ջանի վեոաբերյալ մեղ նյութերի հիմնական մասը գալիս է V դարի մատենադրության տվյալներից, և որ V դարի երկրորդ կեսի հեղինակները հաճախ խոսում են ավելի վաղ դեպքերի և անձերի մասին, V դարի տվյալները մեծ մասամբ կղնենք հնագույն շրջանի մեջ. կստացվի հետևյալ սխեման՝ 1) հնագույն շրջան՝ մինչև V դար, 2) հին շրջան՝ V դարի վերջերից մինչև XI դար, 3) միջին շրջան՝ XII—XVI դդ., 4) նոր շրջան՝ XVII—XX դդ.:

Հարկ ենք համարում նշել, որ բնիկ հայերեն (հնդեվրոպական ծագման) արձատներով կազմված անձնանունների առանձնացումը որոշ պայմանակետով լինում ունի. անհայտ ծագման և հայացած (հայերենի բառապաշարին մերված) արձատներով կազմված, այլև ամբողջովին փոխառված ու սովորական զործածություն ստացած անձնանունները նույնքան հարադատ են երևացել հայերին, որքան մեր կողմից առանձնացված անձնանունները: Մեր տարբերակումն, այսպիսով, կատարված է լեզվաբանական հիմունքով: Այստեղ ստացվում են նաև, այսպես կոչված, հիբրիդային բնույթի բարդ և բաղադրյալ այն անձնանունները, որոնց մեկ բաղադրիչը բնիկ հայերեն է, մյուսը՝ ոչ:

Նախքան բուն նյութի քննությանն անցնելը հարկ ենք համարում մի քանի խոսք ասել հնդեվրոպական անձնանունների բնույթի մասին: Այս անձնանունների ուսումնասիրությունը սկզբնապես հենվում էր գերադասցապես հին հոնդկական, հին իրանական, հին հունական անձնանունների քննության վրա: Լատներեն տարածված էր այն կարծիքը, որ հնդեվրոպական անձնանունները գերադասցապես երկհիմբ բարդություններ են եղել: Հետագայում ցույց տրվեց, որ այդ կարծիքը միակողմանի է. մի կողմից՝ խեթերենի և հնդեվրոպական այլ լեզուների անձնանունների, մյուս կողմից՝ հնդեվրոպական հասարակության կառուցվածքի խորացված ուսումնասիրությունը պարզեց, որ նախ՝ բարդ անունների կողքին մեծ կշիռ են ունեցել նաև միահիմբ անձնանունները⁶, երկրորդ՝ միահիմբ և երկհիմբ անձնանունների զործածությունը հաճախ պայմանավորված է եղել կրողների հասարակական դիրքով և այլ հանգամանքներով:

Հնագույն շրջանի համար ավանդված՝ բնիկ հայերեն (հնդեվրոպական ծագման) արձատներով կազմված անձնանունների ընդհանուր թիվը հինգ սասնյակից չի անցնում, ընդ որում սղանց մեջ չի կարելի հաստատորեն ցույց տալ այնպիսիները, որոնք անմիջաբար գալիս են հնդեվրոպական անձնանուններից:

Վարում և ավելի վաղ զործածված անձնանունների մեջ մեծ թիվ են կազմել իրանական ծագում ունեցողները: Վաղ հայկական պետական կազմավորումների, Արտաշեսյան և Արշակունյան հարստությունների թագավորների անունները հիմնականում իրանական ծագում ունեն: Իրանական տարրը մեծ թիվ է կազմում նաև խորենացու տված, այսպես կոչված, հայկազնյան առասպելական թագավորների և նրանց ազգակիցների անունների մեջ:

Ի մի բերելով օտար և հայ աղբյուրների տվյալները՝ կարելի է մատնանշել V դարում և ավելի վաղ զործածված անձնանունների իմաստային և բուսականական մի շարք տիպեր: Նշենք, որ ի տարբերություն հասարակ անունների, հատուկ անունների դեպքում ժամանակագրական տվյալները երկակի բնույթ ունեն. այստեղ հարկավոր է նկատի առնել ոչ միայն մատենագրական աղբյուրների, այլև այդ աղբյուրների մեջ հիշատակված անունները կրող անձերի ապրած ժամանակը: Ստորև բերվող անձնանունների համար նկատի են առնվել երկու կառգի տվյալներն էլ, այդ թվում՝ նաև առասպելական անձերի վերաբերյալ տեղեկությունները:

Բնիկ հայերեն արձատներով կազմված անձնանուններն ըստ կազմության կարելի է բաժանել 4 խմբի՝ 1) պարզ, 2) ածանցավոր, 3) հոլովման կամ խոնարհման ձև ունեցող և 4) բարդ. ընդ որում 1-ին, 2-րդ և 4-րդ տիպերի անձնանունների առանձնացման չափանիշները երկակի են. կարող են լինել ինչ-

⁶ Հմմտ., օրինակ, E. Pulgram. Indo-European personal names. — Language 23, 1947, p. 189—206.

⁷ Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան. նշվ. աշխ., էջ 57—61:

⁸ Հանդես. № 4

սլես ածանցավոր և բարդ հասարակ անունների անմիջական փոխանցմամբ (կոնվերսիայով) առաջացած, այսինքն՝ անձնանվանական առումով փաստորեն պարզ կամ նախատիպ, այնպես էլ պարզ հասարակ անուններից հատուկ անձնանվանական (հատկապես փոքրացուցիչ-փազաբշական) ածանցներով կազմված անձնանուններ:

Ի տարբերություն հնդկական, իրանական, հունական անձնանունների՝ բուն հայկական ծագման անձնանունների մեջ բարդությամբ կազմվածները սակավաթիվ են, գերազանցապես -այր բաղադրիչով՝ Զարմայր (հնարավոր է իրանական ծագում. հմմտ. արամ. <իռան. Zrnr), Նուրայր, Ունայր (ուն <սուրճ, կռան>+այր), Տիրայր. Սյունեցու բերականության մեջ (VIII դար) հանդիպում է նաև Կուրայր, որ թերևս հին անուն է: Հակառակ այլ լեզուների՝ -տուր բաղադրիչով հնագույն անձնանուններ գրեթե չկան՝ Տեառնտուր անունը կրել է մի եպիսկոպոս, որ ապրել է V դարի երկրորդ կեսին և VI-ի սկզբներին. Աստուածատուր անունը հանդիպում է VI դարից ոչ վաղ. համեմատաբար ազելի ուշ շրջանից են նաև Խաշատուր (XI դար)⁸, Տիրատուր (VII դար) և այլ անձնանուններ, որոնք կապված են հատկապես քրիստոնեության հետ: Հայերի մաս գործածության մեջ են եղել նաև -ուրի բաղադրիչով անձնանունները, ինչպես Սկալուրի (սկալ՝ թրակ. շալու ցեղանունից): Եթե Հալեայ անձնանունը իրոք հայկական ծագում ունի և ոչ իրանական (հմմտ. ավեստ. Fračya- անձնանունը), ապա պետք է ենթադրել համատիպ կազմությամբ այլ անձնանունների գոյությունը ևս:

Զգալի թիվ են կազմել փոքրացուցիչ-փազաբշական -ակ, -իկ, -ուկ ածանցներով անձնանունները՝ կազմված մասամբ հասարակ անուններից, մասամբ ալլ անձնանունների կրճատ ձևերից: Հնդեվրոպական հիմքերից ալս ածանցներով կազմված անձնանուններից են՝ Այրուկ, Դսուրիկ, Եզնիկ, Եղբայրիկ, Երանակ, Բնակ, Լուսիկ (հնում՝ առական), Խաչիկ, Խանդակ (?), Հաուկ, Զագիկ, Զուիկ, Մրչունիկ, Տիրիկ, Տիրուկ: Հնարավոր է նաև Արմենակ (Արմեն < *ormienos՝ հ.-ե. *er- «հուզել. բարձրացնել» արմատից, որտեղից նաև: արմ. (ն), արմատ. դարմ), Թաքիկ (թաք < *tag-t-՝ հ.-ե. *tag- «շողափել, դիպչել, բռնել» արմատից կամ *tata- մանկական բառից), Յուսակ, Յուսիկ [(j-)nyu՝ հ.-ե. *enx- «վարժվել» արմատից. այստեղից ուսանիմ), Յուլակ (*sk'io-lo-՝ հ.-ե. *sk'ai- «ցուցլալ, առկալժել» հիմքից?) անձնանունների հիմքերի հնդեվրոպական ծագումը: Եթե Ասպակ-ը և Անակ-ը իրանական ծագում չունեն, ապա նրանց հիմքերը (Ամա-, Աոն-) բնիկ հայկական են: Հայտնի չէ Կալպակ, Կողթեակ, Կոռնակ, Հայդիկ անձնանունների ծագումը: Հայկակ անձնանունը կազմված է Հայկ-ից:

V դարում և ավելի վաղ տառածված են եղել -ոց (հ.-ե. *-osk'o-) ածանցով անձնանունները, որոնցից Տիրոց-ը և Քալոց-ը հնդեվրոպական հիմքեր ունեն: Այլ ծագման հիմքերով անձնանուններից հիշատակելի են Ալոց, Բալոց, Մաշտոց, Վարդոց:

Անհայտ է -իք-ով կամ -ուք-ով վերջացող Գնիք (գին-ից. հմմտ. նաև ծագումով անհայտ Գարեգին), Գորուք (հմմտ. գորո՞վ), Զուիք անձնանունների ծագումը:

⁸ Սյունեղ և այլուք փակագծերում տրվում է առաջին հիշատակության, իսկ նախադրային շրջանի համար՝ անձնանունը կրողի տարիչու դարը:

⁹ Հնարավոր է -իք-ով անունների իրանական ծագումը, մանավանդ եթե ալլ ածանցը կապ ունի Բիսիսթունի արձանագրության մեջ հիշատակված Haldita անվան -ita-ի հետ. վերջինս սովորաբար համեմատում են հ. ալ. (<մեղ.) Xsairita-, ալ. Zairita- անձնանունների -ita-ի հետ. հմմտ. W. Eilers. Kleinasiatishes. — ZDMG, 94. 1940, S. 220. V. Banatjeanu. Les arméniens des inscriptions de Behistun. — «Studia et acta orientalia», 1 (1956), p. 80; R. Schmitt. Armenische Namen in altpersischen Quellen. — AAL, 1 1950, S. 10—11. Բ. Մ. Դյակոնովը ենթադրում է Haldita անվան համար՝ ամբողջովին ուրարտ. ծագում՝ *Haldi-taitə:

Հաղպադեպ են իրանական ծագում ունեցող -ուհի ածանցով կազմված իգական անձնանունները՝ Աւագուհի (հիմքի ծագումն անհայտ է), Ոգուհի (ոգի-ն հ.-ե. ծագում ունի՝ *pouhjo-):

Հոլովման և խոնարհման ձևերից են կազմված Ձոմն, Տիրաճամ (եթե կսւյ չունի Տիրաճ-ի հետ) անձնանունները: Եթե Արաց-ը հնարովի անուն չէ և իրոք կապված է Արաց. ամսանվան հետ, ապա թերևս առկա է սեռականաձև անձնանուն:

Նշանակալից թիվ են կազմում և հասարակ անունների սովորական փոխանցմամբ (կոնվերսիայով) կազմված հատուկ անունները: Սրանց մեջ ըստ իմաստի կարելի է առանձնացնել մի քանի խումբ:

1) Կենդանիների անուններից կազմված անձնանուններ, որոնք թերևս անձնանունների հնագույն տոտեմական շրջանից եկող շերտն են ներկայացնում՝ Արտոյտ, Բնջուղ, Կորիւն. սրանց պետք է միացնել փոքրացուցիչ-փաղաքական -իկ. -ուկ ածանցներով կազմված անձնանունները՝ Այծեմնիկ (? հանդիպում է Աստվածաշնչում, որպես Տաբիթա անվան թարգմանություն. ավելի ուշ՝ XII դարից կա Այծեման անունը), Դառնիկ, Նգնիկ, Բննակ, Հաւուկ Զագիկ, Մրջինիկ:

2) Աղգակցական հարաբերություններ ցույց տվող բառերից կազմված անձնանուններ՝ Դուստր, Նղբայր, Հայր, Հաւոյ (*patro-. հմմտ. հուն. Πατ-րο-ով կազմվող անձնանունները), Որդի:

3) Սարմնի մասերի անվանումներից կազմված անձնանուններ՝ Թաթիկ, Խարոյ (թաթ՝ հ.-ե.?), Զեռէս (հասարակ անուն):

4) Բնության մարմինների և երևութների անվանումներից կազմված անձնանուններ, որոնք թերևս գալիս են հեթանոսական շրջանից՝ Արեւ (հմմտ. Երեւ, Ռեւ?), Լուսիկ. սրանց թվին է պատկանում նաև Աստղիկ դիցուհու անունը, որ, քրիստոնեության մուտքի հետ կապված, V դարից որպես սովորական անձնանուն չի հիշատակվել:

5) Վերացական անուններից կազմված անձնանուններ (հմմտ. հունական հասապատասխան անձնանունները)՝ Դիւտ, Յոյս (այլև Յուսակ, Յուսիկ):

6) Գոյականներից և ածականներից կազմված բնութագրիչ անձնանուններ՝ Արբուն, Գեղամ (եթե կապված է գեղ արմատի հետ), Հոյ (հմմտ. հույ-ա-կապ?) հմմտ. նաև Քաջ (ծագումն անհայտ):

7) Այլ բառերից կազմված անձնանուններ՝ Գինդ (գինդ «ականջող, օղ, շրջանաձև դարդ»), Սլաֆ, Սուր (եթե իրանական ծագման չէ), Տէր (հմմտ. նաև Տիրոտ):

Այսպիսի անձնանունների թիվը, անշուշտ, ավելի մեծ է եղել հեթանոսության շրջանում, բայց քրիստոնեության մուտքով դրանք դուրս են եկել դրոշմածնությունից և փոխարինվել քրիստոնեական պաշտոնական անձնանուններով:

Բնիկ արձատներով հայկական դիցանուններից են Ամանոր-ը և Աստղիկ-ը. սրանցից առաջինը բարդ անուն է՝ բաղադրիչների՝ հալերենի համար անսովոր շարադասությամբ, ընդ որում ամս-ի մեջ սլա-հպանվել է ամ «տարի» բառի հիմքային հին ձևը. սա խոսում է կազմության արխայիկ բնույթի մասին: Ամանոր-ի երկրորդ՝ Վանատուր անվանումը պարունակում է բնորոշ-առու բաղադրիչը (հմմտ. Տեան-տուր անձնանունը)՝ օտար ծագման առաջին բաղադրիչով: Աստղիկ-ը փաղաքական ածանցով կազմություն է:

Փոքրասիական Տորի Անգեղեայ մականվան՝ Խորենացու կողմից տրված մեկնաբանությունը որպես ան-գեղ (=տգեղ) պետք է համարել ժողովրդական ստուգաբանություն. ավելի հավանական է դրա կապը Անգեղտուն դավառի և նախարարական տոհմի անվան հետ: Հայտնի չէ սրա կապը մի կողմից՝ Անգեղ դիցանվան հետ, որով Աստվածաշնչում թարգմանվել է Nergal (հուն. Νερχελ) աստծու անունը, և մյուս կողմից՝ Անգեղ անձնանվան հետ, որ Հայկի սերնդին պատկանող Փառնավազի որդու՝ Բաղարստի երկրորդ անունն է. Կապ ունի՞ արդյոք անգղ թաշնանվան հետ, ինչպես կարծում է Ն. Աղոնցը:

Թեբեա հնարավոր է անգղ-ի հնդեվրոպական ծագումը՝ *ank- «ծուել, թեբել» արատից. թուրքեր կարող էս այսպես կոչվել ըստ կտուցի ձևի (հմմտ. նույն արատից ծագող թուր. Ա onkalām, Բ onkolmo «փիղ»՝ ըստ կնճիթի ձևի)։

Նանէ դիցուհու անվան՝ նաև բառից ծագելը քիչ հավանական է. ավելի հավանական է սրա փոխառյալ լինելը (հմմտ. ակկադ. Nanaia)։

Անձնանունների պատմական քննության հետագա շրջանի համար մեծ ընդունած ժամանակագրական սահմանը՝ XI դարը, քաղաքական առումով հայտնի է նրանով, որ դադարում է Մեծ Հայքի ինքնուրույն պետականության գոյությունը։ Հին շրջանում բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները ավելի վաղ անձնանունների համեմատությամբ ավելի քիչ են։

Հին շրջանում ևս բարդ անունները սակավաթիվ են՝ բոլորն էլ կապված իրենական-քրիստոնեական գաղափարների հետ՝ Աստուածառուր (VI դար), Խաչառուր (X դար), Խաչատուր (XI դար), Սիրանուն (X դար)։ Ոչ սովորական տիպի բառը կազմություն է Արեւո անձնանունը, եթե այստեղ առկա չէ մի այլ անձնանվան՝ ժողովրդական ստուգաբանության ենթարկված ձևը։ Սրանց հետ միասին հանդիպում են նաև հիբրիդային անուններ՝ օտար ծագման և հայերեն բաղադրիչներով՝ Իրիգուրառուր (VII դար), Հայրապետ (X դար), Ուրտատուր (IX դար)։

Այս շրջանում ևս տարածված են փաղաքական -ակ, -իկ, -ուկ ածանցներով կազմված անձնանունները, որոնք մասամբ փոխանցվել են նախորդ շրջանից, մասամբ հանդես են գալիս հենց այս շրջանում՝ Երիցակ (VI դարի սկիզբ), Քոռնիկ (IX դար, հմմտ. բռն անունը՝ XVII դար), Մառայիկ (XI դար), Օռվակ (XI դար)։ Քննվող ածանցներով կազմված մի շարք անձնանուններ նույնությամբ առնված են համապատասխան հասարակ անուններից՝ Նիծեռակ (VII դար), Թիբեդնիկ (XI դար՝ թիբեդնիկ-ի բարբառալի տարբերակ), Կրդնակ (VII դար), Փոբրիկ (VII դար)։ Հայկական համատիպ անուններ կրել են նաև արվանները՝ Սանուկ (VII դար), այլև փոխառյալ հիմքով, Խոնկուրիկ (VI դար)։

Այս շրջանում հանդես եկած անձնանունների մեջ անձնանվանակազմիչ ուրիշ ածանցներ գրեթե չեն հանդիպում. նշենք միայն Խաչեան անձնանունը (IX դար)։

Շատ անձնանուններ առնված են հայերեն բառերից նույնությամբ. եթե մի կողմ թողնենք փոքրացուցիչ-փաղաքական ածանցներով օժտված և նույնությամբ գործածվող անձնանունները, որոնք նշվեցին վերևում, ապա կարելի է բերել այս շրջանում հանդիպող հետևյալ անձնանունները՝ Քարմ (? X դար՝ գրված արաբ. trm կամ trdm), Մուկն (XI դար), Յարուրիւն (VIII կամ XI դդ.՝ իդական, ավելի ուշ՝ արական)։

Միջին շրջանում (XII—XVI դդ.) հայարմատ անձնանունների քանակը նախորդ շրջանների համեմատությամբ անհամեմատ մեծանում է և ընդգրկում նոր կազմություններ ու կազմության նոր բաղադրիչներ։

Մեծանում է բարդությամբ կազմված անձնանունների քանակը. եթե բարդ համարենք նաև ամեն(ա)-ով կազմությունները, ապա կարելի է արձանագրել հետևյալ բարդ անձնանունները՝ Ամենտիկին (XIV դար), Արեւտիկին (XIII դար), Անտաբեր (XIV դար), Գայլածագ (XIII դար), Բարիշայ (XV դար), Երեցտիկին (XIV դար՝ հասարակ), Թովսմանուկ (XV դար. բուխ-ի հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Լուսաբեր (XIV դար), Լուսերեց (XIV դար), Խաչեդրայր (XIII դար), Խաչերես (XII դար), Խոցաղեղ (XIII դար. Խոց-ի հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Կանանցսիկին (XIV դար. սրանից է Կանանց կոճուտ ձևը XIII դարում), Կուրայր (VIII դար՝ հասարակ), Հայկազն (XV դար՝ Հայկ-ի հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Հայրածայն (XIII դար), Հայրանուն (XIII դար), Հոգեղեղ (XIII դար), Մամատիկին (XIII դար. եթե մամա-ն փոխառյալ չէ), Մայրանուն (XIV կամ XV դդ.), Մեծտիկին (XIII դար), Մեռակեց (XIV դար), Մեռտիկին (XIV դար), Միմոյր (XV դար), Մորե(ւ)համ (XIV դար), Նուրա (XIV դար), Նուրամանուկ (XV

դար), Նորտիկին (XIV դար), Շողտիկին (XIV դար), Ունամուր (XIII դար), Լիւրաղեղ (XV դար), Սիրատիկին (XIV դար), Մրա(յ)հաց (XV դար), Տեառնորդի (XIII դար), Տէրտուր (=Տիրատուր) (XV դար), Տիրամայր (XIII դար), Տիրանն (Տէրանն) (XIII դար), Տիրատէր (XIII դար), Տիրատիկին (XIV դար), Տնտես (XIV դար՝ ամբողջովին առնված), Փոքրմէր (XIV դար), Փոքրաիկին (XIV դար), Քեռեկին (XV դար), Խաչոտ անունը (XIII դար) կարող է լինել ինչպես բարդութուն՝ Խաչ-ոտ(ն), այնպես էլ -ոտ ածանցով կազմութուն:

Ջգալի թիվ են կազմում հիբրիդային բարդ անձնանունները՝ բնիկ հայերեն և օտարազգի ու անհայտ ծագման բաղադրիչներով՝ Աղատիկին (XIII դար), Ամլնատար (XV դար), Ամիւրյա (XV դար), Աչագատ (XIV դար), Աստուածաւէր (XVI դար), Արեգոյն (XII դար), Արեքագունի (XIII դար), Արեշան (XVI դար), Արեշատ (XIV դար), Աագտէր (XV դար), Բարիխարուն (XV դար), Բարիշան (XV դար), Բարիփաշա (XV դար), Բարձրխարուն (XV դար), Գինեվար (XV դար), Գոհարտիկին (XIV դար), Զարդխարուն (XIII դար), Լաւալ (XV դար), Լոյսխարուն (XVI դար), Լոյսպարուն (XVI դար), Խաչաղիգ (XVI դար), Խաչաբաբա (XV դար), Խաչկաւոյ (XII դար), Մովսէս (XV դար), Կախարէր (XIII դար), Հագարմարդ (XV դար), Հայխարուն (XIV դար), Հայրսնտուն (XVI դար), Հայրմելիք (XVI դար), Հոգոյն (XIV դար), Հոգարաշխ (XV դար), Հոռոմտիկին (XIII դար), Մայրապետ (XIV դար), Մայրխարուն (XIII դար), Մանկաւագ (XV դար), Մանկտաւագ (XV դար), Մարեմտուր (XIII դար), Մեծպարուն (XIII դար), Մենտիկին (XIV դար), Սինգոյր (XV դար), Նորապետ (XV դարից առաջ), Նոր(ա)տունկ (XV դար՝ հուն. Νεοφύτης-ի պատճենմամբ), Նորպարուն (XV դար), Շահտիկին (XV դար), Տաղոսկի (XV դար), Տատաղէկ (XIII դար), Շատէմայր (XV դար), Շատլոյս (XIII դար), Շնորհտիկին (XIV դար), Շողմելիք (XV դար), Ոսկեհան (XVI դար), Ոսկետիկին (XIII դար), Ոսկետունկ (XV դար), Պապանուն (XII դար), Սիրանոյշ (XIV դար), Սիրիբախտ (XII դար), Սիրուխտ (XVI դար), Վարդեհես (XIII դար), Վարդիբեր (XVI դար), Տէրաւագ (XIII դար՝ հմտ. Տիրաւագ՝ XIV դար), Տէրպարուն (XV դար), Տիրապետ (նախքան 1420 թ.), Տիրաւագ (XIV դար), Տօնապետ (XIV դար), Տօնաւագ (XVI դար), Փայլակխարուն (XV դար): Կան նաև տարբեր աղբյուրներից, երբեմն էլ միևնույն աղբյուրներից փոխառված բաղադրիչներով հայերենում կազմված բարդ անձնանուններ, որոնցից մի քանիսը հիշատակենք՝ Գոհարխարուն (XIII դար), Գոհարմելիք (Գոհամելիք՝ XIV դար), Գոհարվարդ (XVI դար), Հատմելիք (XV դար), Շնորհատուշան (XIV դար), Ոսկեգոյն (XV դար), Ոսկերուփ (նախքան 1420 թ.), Ոսկեծամ (XII դար), Ոսկեհատ (XIII դար) և այլն:

Բացակասանալի շատ են այն անձնանունները, որոնք կազմված են բարդ կամ բաղադրվալ անունների կոմպոզիցիոն սովորաբար առաջին, երբեմն էլ երկրորդ բաղադրիչի պահպանմամբ, և որոշ դեպքերում փոքրացուցիչ-փաղաքշական -իկ-ի հավելմամբ, ընդ որում միևնույն անձնանունից կարող են յինել մի քանի ձևեր (հմտ. Աստուածատուր-ից Մածուր, Մատուր, Տատուր)՝ Ամլն (XIII դար՝ Ամլնաւագ-ից, հմտ. նաև Զամլն՝ Զամլնտիկին-ից), Գալիկ (XII դար՝ Գալուստ-ից), Խոց (XV դար՝ Խոցաղեղ-ից), Մածուր (XIV դար՝ Աստուածատուր-ից), Մատուր (XIV դար՝ Աստուածատուր-ից), Կանանց (XIII դար՝ Կանանցտիկին-ից), Շաղիկ (XV դար կամ XVI դար՝ Շաղոսկի-ից), Տատուր (XIV դար՝ Աստուածատուր-ից, հմտ. նաև Մածուր, Մատուր), Տիկնաց (XIII դար՝ Տիկնացտիկին-ից): Կրճատ-փաղաքշական կազմութուն է նաև Մեղուր անձնանունը (XVI դար)՝ Մեղուրանոյշ-ից կամ թերևս սեղոյշ < մեղուշ հասարակ անունից:

Նշանակալից թիվ են կազմում փոքրացուցիչ-փաղաքշական -ակ, -իկ, -ուկ վերջածանցներով անձնանունները՝ Աղբալիկ (XII դար), Ապրիկ (XIII դար), Աստղիկ (XV դար), Արեիկ (XIII դար), Գալիկ (XII դար՝ Գալուստ-ից),

Գալուն (XV դար), Գիշուն (XIII դար), Դեղիկ (XIII դար. համտ. Դեղ), Զար-
դարիկ (XV դար. համտ. Զարդար), Թուխիկ (XV դար. Թուխ-ի հնդեվրոպական
ծագումը կասկածելի է), Թուշիկ (XVI դար), Լորիկ (XIII դար), Մերուն (XIV
դար), Մովիկ (XIV դար), Կորկոտակ (XIII դար), Հալուրակ (այլուր-ի բար-
բառային ձև՝ XVI դար. համտ. Հալուր՝ XVI դար), Հալիկ (XIII դար. համտ.
Հալուկ՝ V դար), Հոդիկ (XIII դար), Հովիկ (XIV դար), Մամիկ (XIII դար.
մամ-ի հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Սենիկ (XIII դար. ամբողջո-
վին առնված մենիկ «մենակ» ձևից), Նանիկ (XIV դար. նան-ի հնդեվրոպա-
կան ծագումը կասկածելի է), Նորիկ (XIV դար), Նադիկ (XV դար կամ XVI
դար՝ Շաղոսկի-ից), Շոդիկ (XII դար. թերևս Շոդեր-ից), Ոստիկ (XVI դար),
Սիրիկ (XIV դար), Սիրունակ (XV դար), Սիրունիկ (XV դար), Տուրիկ (XIII
դար), Տոնիկ (նախքան 1420 թ. համտ. Տոնական, XIV դար): Որոշ դեպքերում
-իկ, -ուկ ածանցներով անձնանունները առնված են ամբողջությամբ համա-
պատասխան հասարակ անուններից՝ Եղնիկ (XIII դար), Երանիկ (XIII դար),
Զատիկ (XVI դար), Փափուկ (XV դար):

Հանդիպում են նաև -ուհի ածանցով կազմված իդական անձնանուններ՝
Երանուհի (XV դար), Զարմանուհի (XIV դար), Մերուհի (XIV դար):

Իսկական լայն տարածում ունեն այն անձնանունները, որոնք ներկա-
յացնում են հղումված և խոնարհված ձևեր. 1) հոգնակի սեռականի ձևեր՝ մա-
սամր ստացված հաջորդ հատկացյալի կրճատմամբ, մասամբ ինքնուրույն
կազմություններ (հատկապես հավաքական արժեքով)՝ Ականց (XIII դար),
Աղբրաց (XIV դար. բոլոր մեծադասի՝ աղբրացու ձևից), Գալոց (XV դար), Գի-
նոց (XIV դար), Մաղկանց (XII դար), Կանանց (XIII դար՝ Կանանցտիկին-ից),
Հալունց (XV դար, համտ. բարբառային հերանց), Որդոց (XVI դար՝ Որդոց(ն)
որոշման բառակապակցությունից), Տիկնաց (XIII դար՝ Տիկնացտիկին բառա-
կապակցությունից), Տիրանց (XIII դար՝ իգական). 2) հոգնակի ուղղականի ձե-
վեր՝ արդեն տարածված -եր հոգնակերտով՝ Ակներ (XIII դար), Եղներ (XV
դար), Ըններ (XIII դար), Լուներ (XIII դար. թե՛ Լուներես-ից կրճատված),
Խալներ (XII դար), Խաչեր (XIII դար), Մամեր (XIII դար՝ հիշատակ երկու
տառերի՝ «մամեոի». մամ-ի հնդեվրոպական լինելը կասկածելի է), Մասներ
(XIV դար), Տերեր (XIV դար՝ տէր-ի բարբառային տարբերակից). 3) բայա-
կան ունադան ձևեր՝ ինչպես խոնարհված, այնպես էլ դերբայական (գրաբար-
յան -եալ և ոչ գրաբարյան -ել, ած, -ելիս. վերջինս կասկածելի է)՝ Գտալ
(XVI դար), Յուսամ (XIII դար), Երանեալ (XIII դար), Մալրացեալ (XII դար),
Խաչելիս (XVI դար), Խնդրած (XV դար), Տուած (XV դար): Հազվադեպ հանդի-
պում են նաև այլ ձևեր՝ Աղբերանի (XV դար), Աւետիս (XII դար), Զամէնտի-
կին (XIV դար) և սրանից կրճատված Զամէն (XIV դար), Սէրով (XV դար),
Քառասունց (XII դարի կրոնավորի անուն՝ տրված ի պատիվ քառասուն վկա-
ներին):

Նատ են պարզ կամ ածանցավոր, երբեմն էլ բարդ հասարակ անուններից
նույնությամբ առնված անձնանուններ՝ գերազանցապես նույնական, մասամբ
նաև տարազական առարկաներ նշանակող գոյականներից, այլև ածականներից՝
Աղաւի (XV դար), Աղուոր (XIII դար), Այծեամն (XII դար), Անանց (XIV
դար), Անքառամ (XV դար), Աննման (XIV դար), Առիւծ (XII դար), Աստ-
նուոր (XVI դար), Արբուն (XV դար), Աւետ (XII դար), Աւետիք (XII դար.
համտ. Աւետիս), Բարձր (XV դար), Բարունակ (XV դար՝ բարդ բառից), Բոյս
(XIV դար), Գալլ (XIV դար), Դալար (XIII դար), Դեղ (XIII դար), Դեղին
(XIII դար), Երէց (XIV դար), Երծար (XIII կամ XIV դարեր), Երկար (XIV
դար), Երկայն (XIII դար), Զատիկ (XIV դար), Զարդար (XV դար), Զգոն (XV
դար), Ինտիր (ընտիր-ից. XV դար), Լոյս (XIII դար), Լուսեղէն (XIV դար),
Լուսին (XV դար), Խաղաղութիւն (XV դար. համտ. Արքայութիւն՝ XII դար և
Յարութիւն՝ VIII դար կամ IX դար), Խաչում (XVI դար), Խելաւ (XIII դար),
Խնդուն (XIV դար), Մառ (XVI դար), Մեր (XIII դար), Մերուն (XIII դար. համտ.
սրա տարբերակը՝ Մերոն՝ XIV դար), Կանանց (Կանաչ-ի բարբառային տար-

բերակը՝ XIII դար), Կախու (XV դար. հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Կեցուն (XV դար), Կյուր (XVI դար), Համեղ (XIV դար), Հերիֆ (XIV դար. հրեական ծագումը կասկածելի է), հոգի (XIII դար), Զորենի (XIV դար՝ ձորից), Մամէ (XV դար. հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Մին (XV դար), Նարուրին (XIV դար՝ որպես արական. որպես իգական՝ VIII կամ IX դարեր), Յորդոր (XIII դար), Պայծառ (XIII դար), Պտուղ (XIV դար), Սէր (XIII դար), Սիրուն (XIV դար՝ արական), Տէրուն (XVI դար՝ Տէրին բարբառալին տարբերակով՝ XV դար), Տէրունական (XVI դար), Տէրտէր (XIII դար), Տիկին (XIII դար), Տիրացու (XIII դար), Քնփուղ (XIV դար):

Այս շրջանի և հետագա անձնանունների մեջ հանդիպում են շրջակա լեզուներից փոխառված փոքրացուցիչ-փաղաքական ածանցներով ձևեր, ինչպես Խալֆո (XIV դար), որ կազմված է լեհական փոքրացուցիչ-փաղաքական ածանցով՝ լեհահայերի մոտ:

Այս և հետագա շրջանների անձնանունների էական գծերից մեկն էլ պետք է համարել համաբանական կազմություններ՝ հնից ավանդված Նագենիկ, Խաթենիկ իրանական ծագման անձնանունների օրինակով կազմվել է Խաթենիկ անձնանունը (անթվական մի արձանագրության մեջ՝ արական). հունական -ուս, -էս վերջացող անձնանունների օրինակով կազմվել են Եղբայրոս (XIII դար. ըստ Աճառյանի թերևս Եղբայրիկս ձևի աղավաղում), Նորոգէս (XIII դար), թերևս նաև Սիրանէս (XIII դար. Աճառյանը սխալմամբ միացնում է հնում ավանդված Սիրինոս-ի հետ): Համաբանական կազմությունները լայնորեն տարածվում են նաև հետագայում՝ կապված հասարակական ճաշակի և նորաձևության հետ:

Նոր շրջանի քննությունը նպատակահարմար է կատարել վաղ աշխարհաբարի և հետագա փուլերի համար առանձին-առանձին: Վաղ աշխարհաբարի փուլում (XVII դարի սկզբներից մինչև XIX դարի կեսերը՝ գրական աշխարհաբարի չաղթանակը) շարունակվում են նախորդ շրջանի միտումները, միայն թե մեծ չափով նվազում է բնիկ հայերեն արձատներով անձնանունների կազմումը. ավելի շատ օգտագործվում են նախորդ շրջաններից եկող անձնանունները:

Շարունակվում է բարդ անձնանունների առաջացման ընթացքը, թեև սրբանց քանակը նախորդ շրջանի համեմատությամբ մեծ չէ՝ Աղբրացեղ (XVII դար) և հիբրիդային Փանգմայր (XVII դար), Իղաբեր (XIX դար), Խաչիպապ (XVIII դար) և Խաչպապ (XIX դար), Խաչիսարուն (XVII դար), Մայրփաշա (XVII դար), Նորշահ (XVII դար), Սիրախարուն (XVII դար), Սիրիխան (XVIII դար):

Մեծ թիվ չեն կազմում նաև փոքրացուցիչ-փաղաքական ածանցներով կազմված անձնանունները, ընդ որում հանդիպում են միայն -իկ-ը և -ուկ-ը՝ Աստուածատուրիկ (XVIII դար), Խոցիկ (XVII դար՝ Խոցաղեղ-ից), Մառիկ (XVII դար), Մառուկ (XVII դար), Մերիկ (XVII դար), Մեղրիկ (XVIII դար), Նորուկ (XIX դար), Տէրիկ (XVII դար): Մանկիկ անձնանունը (XVII դար) անձնանվանական կազմություն է Մանուկ-ից կամ թերևս ամբողջովին առնրված մանկիկ-ից:

Համապատասխանաբար մեծ թիվ չեն կազմում հասարակ անուններից նույնությամբ առնված անձնանունները՝ Եղինար (XVII դար՝ ժող. եղնար «էղ և դնիկ» բառից), Երանի (XVIII դար), Թոռն (XVII դար), Մով (XVIII դար. հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Խնդիր (XIX դար), Կրուն (XVII դար. բարբառային կրուն «կոորդի միջուկ» բառից), Հրեղէն (XVIII դար), Մնացալան (XVII դար. թերևս անձնանվանական ինքնուրույն կազմություն), Սիրալան (XVIII դար), Տոն (XVIII դար), Փարբան (XVII դար), Փաղցեհնի (XVII դար):

Այս փուլից ևս կան դերբալական ձևերից առնված և հոգնակի ձև առնուններ՝ Նաներ (XVII դար), Տոներ (XVII դար) և Սիրող (XVII դար), Փարե-լի (XVII դար):

Կան մի քանի հաղվադեպ կաղմություններ Նանուշ (XVII դար), Տիրուհի (XVIII դար):

Նոր գրական լեզվի հրկու ճյուղերի հաղթանակը, տարածումը և նորմավորումը, այլև աղգային ինքնագիտակցության ուժեղացումը XIX դարի կեսերից հայերեն անձնանունների կաղմության և գործածության մեջ առաջ են բերում նոր միտումներ և ուժեղացնում ավելի վաղ նկատվող բոլոր երևույթները:

Աղգային ինքնագիտակցության ուժեղացման, սեփական պատմական սովանդությունների վերագնահատման հետ կապված հակում է նկատվում վերականգնականայնելու և լայն գործածություն տալու հայկական հնագույն ավանդույթով հասած և Մովսես խորենացու, Եղիշեի ու այլ պատմիչների հեղինակությամբ հաստատված անձնանուններին, որոնք, անկախ նրանց իրական ծագումից, դիտվում են որպես բուն հայկական անուններ՝ Արմեն, Արմենակ, Ջալալյան, Հայկ և այլն: Մյուս միակողմ է հայ նոր գրական լեզվի մշակման մեջ իշխող մաքրասիրական միտումը, որ քննարկվող բնագավառում հանդեպնում է ակնհայտորեն թյուրքական և նոր պարսկական անձնանունների գործածության սահմանափակմանը և՛ հայ եկեղեցու կողմից և՛ մտավորականության ջանքերով:

Արևատաշայ և արևելահայ հատվածների քաղաքական, լեզվական և մշակութային տարբերությունները համապատասխան արտահայտություն են գրանում նաև անձնանունների կաղմի և գործածության տարբերությունների մեջ: Մարբեր են հնից եկող և նորակաղմ անձնանունների գործածության շրջանակները: Արևատաշայերի մոտ լրացուցիչ գործածություն են ստանում արևատակվորական, հատկապես ֆրանսիական, արևելահայերի մոտ՝ ռուսական (ռուսների մոտ: գործածվող) բոլոր անձնանունները: Նոր տարբերություններ է առաջ բերում աղգանունների պաշտոնական գործածությունը, որ ընդհանրապես փոխում է անվանման համակարգը: Ռուսաստանում ապրող հայերի մեջ պաշտոնական աղգանունները վաղ են տարածվել. գործածության մեջ են եղել -եան-ով (հմմտ. Կլեոպատրա Սարաֆեան՝ XVIII դար), -եանց-ով, ռուսերենից փոխառված -սկ-ով աղգանունները, ընդ որում -եանց-ի հետ միասին գործածվել է -եան-ը որպես հայրանվանական ածանց: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացվելու հետ միասին աղգանունների տարածումը պաշտոնական բնույթ է ստանում Անդրկովկասի հայերի մեջ: Հ. Աճառյանի վկայությամբ Ռուբրիայի, հատկապես Կոստանդնուպոլսի հայերը պաշտոնական աղգանուններ են սկսում գործածել 1888 թ.: Հարկավոր է նշել, որ աղգանունների գործածության ազատությունը սահմանափակված է, և դրանք սովորաբար անցնում են սերնդից սերունդ, մինչդեռ բուն անձնանունների ընտրությունը համեմատաբար ազատ է և հենվում է դրանք տվողների հասարակական դիրքի, Բմբուլների ու զեղագիտական ճաշակի, ժամանակի միտումների և նորաձևության վրա:

Նորագույն շրջանում անձնանունների կաղմության և գործածության մեջ իշխող մասնակի միտումներից նշենք մի քանիսը, որոնք հիմնականում կապված են քննվող նյութի հետ. ա) լայնորեն տարածվում են արական անձնանուններից և հասարակ անուններից -անուշ, -ունի բաղադրիչներով կաղմված իգական անձնանունները՝ Արմանուշ, Արմանունի, Գեղունի, Գեղանուշ, Լուսանուշ և այլն. բ) հնից ավանդված անձնանունների օրինակով կաղմվում են նոր անձնանուններ՝ Արփենիկ (հմմտ. Սարենիկ, Նազենիկ), Ժիրայր (հմմտ. Նուրայր, Ջալալյան) և այլն. գ) տարբեր ժամանակներում հանդես են գալիս համաբանությամբ կաղմված նորանոր, հատկապես իգական անձնանուններ՝ որևէ տեղից սկսված երկրորդ բաղադրիչներով՝ Արփինե, Օղկինե և այլն. դ) կաղմվում են նոր բարդ անուններ գեղեցիկ համարվող այնպիսի բաղադրիչներով, ինչպիսիք են Հրա-՝ Հրավարդ, Հրաբլի, -վարդ՝ Հրավարդ, Նուր-վարդ և այլն. ե) շարունակում են կաղմվել նոր անձնանուններ հասարակ անունների պարզ փոխանցմամբ, այլև -իկ, -ուն ածանցներով՝ Արծիկ, Արծիկ,

Գառուն, Դեղեցիկ, Դեղձանիկ, Վերջալույս (համտ. Արշալույս), Փալլուն, Փայլունիկ և այլն:

Ի մի բերելով բնիկ հայերեն (հնդեվրոպական ծագման) արմատներով կազմված անձնանունների բննութային արդյունքները և դրանք զուգադրելով ալլ կարգի տվյալների հետ՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

1. Բնիկ հայերեն արմատներով կազմված (ալլ թվում՝ հիբրիդային) մի քանի հարյուր անձնանունների ավելի քան կեսը բաժին է ընկնում միջին դարերին: Դա բացատրվում է ինչպես ժողովրդական լայն խավերի անձնանվանակերտ դերի ուժեղացմամբ, — մի միտում, որ, բնականաբար, հենվում է լեզվի գործածական, ալլ թվում բնիկ բառերի վրա, — այնպես էլ ժողովրդական տարբեր խավերի անձնանունների վերաբերյալ տվյալների բազմացմամբ: Խախտող շոքանների անձնանունները գերադանցապես մատենագրական բնույթի են և պատկանում են մեծ մասամբ պետական ու կրոնական զանազան նշանակություն ունեցող գործիչներին: Միջին շրջանի անձնանունները շատ ավելի լայն ընդգրկում ունեն, և նրանց վերաբերյալ տեղեկությունները քաղված են ոչ միայն մատենագրական աղբյուրներից, այլև հիշատակարաններից, արձանաւորություններից, ալլ թվում՝ դամբանագրերից և այլն: Անշուշտ, կարևոր դեր են խաղում նաև քաղաքական, կրոնական և արտալեզվական ալլ կարգի գործողները՝ Կիլիկիայի հայկական պետականության գոյությունը, Մեծ Հայքում Զաքարյանների հաստատված տիրապետությունը, Ֆեոդալական մասնատվածությունը և գաղթների հետ կապված տեղական նախաձեռնության ուժեղացումը, արտաքին ազդեցությունների կրոնա-քրիստոնեական դիմադրողականության ձգտումը և այլն: Սրանց միանում է միջին դարական հայերենի և բարբառների գերի ուժեղացումը, որ հիմք է տալիս ոչ գրաբարածն անձնանունների երևան գալուն համար:

2. Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների տարածվածությունը և կենսունակության աստիճանը տարբեր է: Լայն տարածում ստացած անձնանունների կողքին հանդիպում են այնպիսիները, որոնց գործածությունը սահմանափակվում է մեկ-երկու դեպքով: Բավականաչափ շատ են այն անձնանունները, որոնք սկզբնապես սակավադեպ լինելով՝ հետագայում վերականգնվում են և տարածվում հայերի ազգային ինքնագիտակցության ուժեղացման հետ կապված: Կան անձնանուններ էլ, որոնք որոշ ժամանակ տարածվելով՝ հետագայում դադարում են գործածվելուց: Բնիկ հայերեն բաղադրիչներով կազմված անձնանուններից համեմատաբար տարածված և հարատև են եղել հետևյալները՝ Առախ (XII դար), Աստուածատուր (VI դար. կրթաւորված՝ Մատուր, Տատուր, Ասատուր և այլն), Արեւիկ (V դար), Աւետիք և Աւետիս (XII դար), Գալուստ (XII դար), Գիւտ (V դար), Եղբայրիկ (V դար), Բոռնիկ (IX դար), Լուսիկ (I դար. սկզբնապես արական), Խաչատուր (XI դար), Խաչեր (XIII դար), Խաչերես (XII դար), Խաչիկ (V դար), Մեր (XIII դար), Մերուն (XIII դար), Հայր (հնագույն ժամանակներից), Հայրապետ (X դար), Հերիք (XVI դար. հնդեվրոպական ծագումը կասկածելի է), Հերիքնազ (XVII դար. համտ. նախորդը), Չագիկ (առասպելական և VIII դար), Մանուկ (XVII դար. այստեղից Մանկիկ՝ IX դար), Մխիթար (II դար), Մնացական (XVII դար), Յարութիւն (VIII դար կամ IX դար՝ իգական, XIV դար՝ տղական), Յոյս (առասպելական և VI դար), Յուսիկ (I դար), Սիրուն (XIV դար՝ արական), Սրբունի (XVI դար), Տիկին (XII դար, ալլ և Տիկնազ (XIII դար), Տիրանուն (X դար), Տիրան (XIII դար՝ իգական), Տիրատուր (VII դար), Տիրացո (XIII դար), Տոնական (XIV դար) և այլն: Հետաքրքրական է նշել, որ ՀԱՍՆ Միսիստրների խորհրդին առնթեր տերմինաբանական կոմիտեի հանձնարարած ցուցակի¹⁰ արական 319 և իգական 196 անձնանուններից բնիկ հայերեն արմատներ ունեն (ներառյալ նաև հիբրիդայինները) համապատասխանաբար 50-ը (+10 կասկածելի) և 63-ը (+14 կասկածելի):

Ն. Եթե բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունները ըստ ստորածվածության և տեսակարար կշռի համեմատենք օտար աղբյուրներից անընթաց և օտար (փոխառյալ) արմատներով կազմված անձնանունների հետ, ապա կարելի է ասել, որ հին և նոր ժամանակներում գերակշռող են երկրորդները. միջին շրջանում կարելի է արձանագրել որոշ հավասարակշռություն: Հնագույն և հին շրջանում լայն տարածում են ունեցել իրանական անձնանունները. քրիստոնեության մուտքից հետո տարածվել են նաև աստվածաշնչային և հունական անձնանունները. իրանական՝ Արշակ, Արշաիր, Արտաշես, Արտավազդ, Համագաստ, Ներսէն, Շաւարշ, Վարդան, Գուրգեն, Տիգրան և այլն. հունական՝ Անդրեաս, Բարսեղ, Գէորգ, Գրիգոր, Թեյդորոս, Կիրակոս, Հեղինէ, Մարտիրոս, Կիկողայոս, Ստեփանոս և այլն:

Հետապնդում սրանց գումարում են արաբական, նոր պատկական, միջին դարերի եվրոպական, թյուրքական, ապա նոր եվրոպական, այդ թվում՝ արևելահայերի մոտ՝ ռուսական, անձնանունները:

Ժ. Անձնանունների, այդ թվում՝ նաև բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների մեջ ըստ տարածքային ընդգրկման կարելի է տարբերել երկու շերտ՝ տարածքային սահմանափակում չունեցողներ և աղբյուրի սահմանափակում ունեցողներ: Առաջին շերտին պատկանողները գործածության են հայերի բնակության բոլոր տարածքներում. դրանք գերազանցապես ժամանակին եկեղեցու կողմից կանոնարկված անձնանուններն են. մեր օրերում աղբյուրին են ՁԱԳՄ-ի կողմից հատուկ ցուցակներով հանձնարարվող անձնանունները: Երկրորդ շերտին պատկանող անձնանունները գործածության մեջ են միայն որոշ տարածքներում և լայն տարածում չունեն: Առաջին շերտին պատկանող անձնանուններից են Աստուածատուր, Աւետիք, Խաչատուր, Մխիթար, Յարութիւն և այլն: Երկրորդ շերտին են պատկանում, օրինակ, միջին շրջանի կիլիկյան որոշ անձնանուններ, որոնք Մեծ Հայքի շրջաններում չեն գործածվել կամ գրեթե չեն գործածվել. դրանք մասամբ ինքնակազմ, մասամբ փոխառյալ բնույթի են. վերջիններիս մեջ հատկապես պետք է նշել լատինական և ընդհանրապես եվրոպական անունները, մասամբ էլ Կիլիկիայի տարածքին հատուկ արաբական անունները՝ Ալիս, Ջաբել, Լեոն, Հեթում, Մլեֆ և այլն: Տարածքային սահմանափակություն ունեն ժողովրդական որոշ կուրդի անուններ, որոնք մասամբ բնորոշվում են բարբառային առանձնահատկություններով. ալսպես, Թիքեղնիկ անունը, որ Թիքեղնիկի տարբերակն է, իր եղբայր հնչյունափոխությամբ հատուկ է եղել Հայաստանի հարավ-արևմտյան տարածքներին, տարածքային տարբերություններ պետք է ունեցած լինեն Տիրաւազ և Տիրաւազ (հմմտ. նաև Աւագաւր) անձնանունները և այլն:

Ճ. Անձնանունների մեջ արտացոլում են գտել և գտնում հասարակական դիրքի, կրթության հետ կապված և համատիպ բնույթի ալ տարբերություններ: Մի շարք անուններ հնագույն և հին շրջաններում հատուկ են եղել թագավորներին ու իշխաններին և ավանդվել սերնդից սերունդ: Եղել են հատկապես կրոնավորներին բնութագրող անվանումներ: Սրանց հակառակ գոյություն են ունեցել միայն հասարակ խավերին հատուկ անվանումներ: Վերջիններից են Հ. Աճառյանի առանձնացրած, ալսպես կոչված, հալ ժողովրդական անունները, այդ թվում՝ Թուխմամ, Հերիֆնազ, Նուրաբ, Նուրվարդ, Շաւուսկի, Վարդիթեւ և այլն, որոնք հենվում են հաճախ բանաստեղծական երեկավայության և պատկերավոր արտահայտությունների վրա: Երբեմն հասարակական տարբերություններ են արտացոլում միևնույն անվան հնչյունական և ձևաբանական տարբերակները. Անալի՝ պաշտոնական անվան Աւետիս ձևը ափելի շատ հատուկ է եղել ժողովրդական հասարակ խավերին: Ալսպիսի բնույթ են ունեցել նաև փոքրացուցիչ-փաղաքշական անուններով շատ հատուկ անուններ:

Դ. Շատ վաղ կորցրած լինելով սեռային տարբերությունները՝ հայերենը չի ունեցել արական և իգական անձնանունների հատուկ տարբերիչներ: Երբեմն միևնույն անձնանունները տարբեր տարածքներում և տարբեր ժամանակներ-

րուս գործածվել են որպես արական կամ իգական անձնանուններ. ալսպէս, Լուսիկ անձնանունը հնում գերազանցապես արական անձնանուն է եղել, Ար- շալուլս, Վարդ անձնանունները այժմ էլ տրվում են և՛ արական, և՛ իգական սեռի անձներին: Արական և իգական անձնանունների տարբերակումը բնիկ հա- յերեն արմատներով կազմված անձնանունների դեպքում հենվել է գերազան- ցապես սովորույթի և ավանդույթի, փոխառյալ անունների դեպքում՝ փոխա- տու ժողովուրդների համապատասխան գործածության վրա: Համեմատաբար ուշ է սկսվել -անոյշ և -ունի իգականակերտ ածանցների լայն գործածությունը: Դ. Բնիկ հայերեն արմատներով կազմված անձնանունների բնութագրումն սովորաբար նրանց պատմական և գործառական մի քանի առանձնահատկու- լիկությունների մատնանշմամբ. ա) հայ գրի և գրականության սկզբնավորումից հետո կատարված թարգմանությունների մեջ բառերի փոխառությունը հայկա- ղիկ է, մինչդեռ անձնանունների փոխառությունը և հույ անձների նկատա- ութիքը նրանց նույնությամբ գործածելը սովորական է ողել. սրա հետ միա- սին միտում է նկատվել օտար անձնանունների թարգմանության միջոցով հայ- կական նոր անձնանուններ ստեղծելու. զգալի թիվ են կազմել հունական ա- նունների պատճենմամբ ստեղծված անձնանունները՝ Առաֆել (հմմտ. հուն. ἀφελος), Աստուածաուր (հմմտ. հուն. Ἀστωδωρος), Խաչիկ (հմմտ. հուն. Χασιος), Յարութիւն (հմմտ. հուն. Ἰαρυθηνος) և այլն: Միևնույն անձնանունը ստացվել է երբ. Նաում-ի կամ Սէթ-ի (հունականացված ձև) թարգմանու- թյամբ¹⁾, ընդ որում առնվել են նույնությունը նաև սկզբնաձևերը. բ) անձնա- նունների՝ հասարակական տարբերություններին միանում է հասարակական հոգեբանությամբ պայմանավորված այնպիսի երևույթների իրադացած դերը, ինչպիսիք են համաբանությունը և նորաձևությունը (հմմտ. -ենիկ, -ինն վեր- ջակադմիչներով անձնանունների տարածումը). գ) անձնանունների տարած- ւածությունը հայտանիշներից մեկն էլ ազգանունների կազմելու կարողությունն է, թեև, իհարկե, անձնանունների և ազգանվանական բաղադրիչների միջև միա- նշանակ հասապատասխանություն չկա. կան անձնանուններ, որոնք ազգանուն- ներ չեն կառմում և, ընդհակառակն, կան ազգանուններ, որոնք անձնանուննե- րից չեն կազմված. դ) անձնանունների զարգացման՝ վերելում գծված պատկերը չի կարող լրացատար գաղափար տալ նրանց իրական վիճակի մասին. որոշ անձնանուններ ընդհանրապես չեն ավանդվել (հատկապես հնագույն շրջանից), ուրիշ անձնանուններ սովանդվել են գործածության ժամանակից ապելի ուշ և այլն:

Ներկա հոդվածը անվանագրական բոլոր հարցերի լուծման հավանու- թյունից շատ հեռու է: Հայկական անձնանունների համակողմանի ուսումնա- սիրությունը եղել և մնում է հայագիտության կարևոր խնդիրներից մեկը. ալն կարող է լուծել ոչ միայն լեզվաբանական, այլև պատմական, բանասիրական, աղագրական և այլ կարգի էական մի շարք հարցեր:

АРМЯНСКИЕ ЛИЧНЫЕ ИМЕНА, ОБРАЗОВАННЫЕ ОТ ИСКОННО АРМЯНСКИХ КОРНЕЙ

Академик АН АрмССР Г. Б. ДЖАУКЯН

Резюме

Сбор армянских личных имен в армянской лексикографии начинается во вто- рой половине XVIII в., а основы их научного изучения закладываются Г. Гюбшма- ном и Ф. Юсти в конце XIX в. Появление пятитомного «Словаря личных имен» (1942—1962) Р. Ачаряна знаменует собой новый этап развития в этой области, хотя сам Ачарян и последующие исследователи затрагивают лишь некоторые вопросы теории и истории армянских личных имен.

Можно сказать, что изучение армянских личных имен до сих пор шло несколько односторонне: главное внимание было уделено заимствованным личным именам. В настоящей статье делается попытка проследить пути развития личных имен, образованных от исконно армянских корней индоевропейского происхождения. С этой целью, согласно принятой в армянском языкознании периодизации, выделяются древнейшие личные имена, употребление которых приписывается различными письменными источниками дописьменному периоду и началу письменного, и личные имена, засвидетельствованные в древний (по XI в.), средний (XII—XVI вв.) и новый (с XVII в. до наших дней) периоды развития армянского языка, причем для нового периода выделяется новейший этап—с середины XIX в. Древнейших личных имен, образованных от исконно армянских корней, насчитывается не более пяти десятков. Среди них можно выделить четыре основных типа: простые, суффиксальные, сложные и имена, являющиеся формами склонения и спряжения. С конца V по XI вв. засвидетельствовано приблизительно столько же личных имен рассматриваемого типа, причем лишь часть имен предыдущего периода продолжает употребляться. Лишь в средний период (XII—XVI вв.) наблюдается резкое увеличение количества личных имен, образованных от исконно армянских корней,—более двухсот. На начальном этапе развития нового периода их число снова уменьшается, однако после окончательного утверждения новоармянского литературного языка наблюдается как увеличение числа новообразованных личных имен рассматриваемого типа, так и возрождение в употреблении забытых.

В статье рассматриваются также вопросы жизнениности и распространенности личных имен, социальных условий их функционирования, роли аналогии и калькирования в их образовании и т. п.